

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ. Ա. Գրիգորյան

ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ԴԻՅՑ ՊԻՆԱՅ

Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS
Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ

ՄԷԿ անգամի համար տողը 3 ՂՐԶ. ողջ.
ՄԷԿ անգամի առաջին ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան ՂՐԶ. ողջ 100
Վեցամսեայ » 55
Եռամսեայ » 30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան Ֆր. 26
Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԹԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒՄ

ՈՒՆԷ ԴՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԲԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԻ, ՀԵՆՐԻԿԻՆԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱՂԻՅԱՆ

ՆԱՄԱԿ ԱՂԵՔԱՆՈՒԹԵԱՆ

(ՄԵՐ ՄԱՍՆԱԴՐ ԹՂԹԱԿՑԷՆ)

Ամեն բան վախճան մը ունի. բնական օրէնք մ'ի այս ուրմէ չէր կըրնար խոյս տալ նոյն իսկ քաղաքիս թաղական խորհուրդը, խորհուրդ մեծ... բայց ոչ յաւիտեական: Վերջապէս ամեն բան կարգի կը մտնայ և տարակույս չունիմ բնաւ որ այսուհետեւ այլևս վերջ պիտի գտնեն այն ամեն կռիւները ու խայտառակութիւնները որ ամիսներէ ի վեր տակն ու վրայ ըրին քաղաքիս Հայ գաղութը:

Եւ այս տնօրէնութիւնը ընելու համար հարկ եղաւ որ վսեմ. Պօղոս փաշան ձեռք առնէր ամենէն կտրուկը միջոցներուն և ցոյց տար արդարասիրութիւն մը և անկողմնակալութիւն մը որ վեր են ամեն գովեստէ:

Միթէ Նորին վսեմութեան չենք պարտիր կազմութիւնը ընտրողական ժողովին որ արդէն գործի ձեռնարկած է և անշուշտ քիչ օրէն մեզ պիտի տայ եռապատիկ ցանկը երջանիկ ընտրելեաց:

Որքան որ զիտել տուողներ կան թէ այդ ընտրողական ժողովը գերծ չէ կազմութեան վեցերէ, քանի որ, կ'ըսեն, ատիկայ կը համախմբէ նախկին թաղականները և ասոնց ձօնաւորները, սակայն կը սիրենք յուսալ որ շնորհիւ Պօղոս փաշայի վերին հսկողութեան, ամեն ինչ կանոնաւորութեամբ պիտի անցնի ընտրութեանց միջոցին:

Գաղափար մը տալու համար ձեռքի Նորին վսեմութեան լուրջ և անկողմնակալ դործունէութեան վրայ, բաւական է ըսել թէ անցեալ ուրբաթ Օթէլ խափիլի մէջ գումարուած ժողովէն առաջ նոյն ինքն փաշան պատուիրած է կանխաւ ժողովին չի բերել թաղական խորհրդի նախկին քարտուղարը, որու ծառայութեանց այլևս պէտք չէր մնացած:

Ահա ինչու Տիար Հ. Պէրպէրեան — եթէ չեմ սխալիր — հրապարակեցաւ այդ օրուան նիստին, ժողովին ատեն նագրութիւնը արձանագրելու համար: Այդ ժողովին մէջ խիստ կարեւոր

որոշումներ տրուեցան որոնց կարգին է նոր ընտրութիւնները:

Հակառակ իրեն եղած հրաւերին, Այվազեան Եպիսկոպոս, հիւանդութիւնը պատրուակելով չէ ուղած մասնակցիլ այդ ժողովին, մինչդեռ Ն. Գերապատուութիւնը 24 ժամ ետքը, ինչպէս նաև յաջորդ երկուշաբթիին ներկայ գտնուած է հարուստի տան մը մէջ կատարուած պատկազրութեան մը, ինչ որ շատ զայրացուցած է փաշան, և իրաւամբ, քանի որ Նորին Գերապատուութիւնը իր այդ արարքով, ապացուցած է թէ ազգին շահերէն վեր կը բռնէ իր անձնական շահը ինչ որ կղերականի մը համար եպիսկոպոս արարք մը կը համարուի պարզապէս:

Ժողովականներէ մէկուն անգաղտնապահութեան կը պարտիր պատմութիւնը հետեւեալ միջոցապէս որ անդի ունեցած է այդ ժողովին մէջ:

Առաջնորդին բացակայութիւնը commenté եղած միջոցին, թաղականներուն ամենէն ներքամիտը բաւարարութիւն մը մէջտեղ նետած է զոր շատ à propos դտած են իր պաշտօնակիցները:

— Սրբազանին միղարգելութիւնը մեզի արգելք ըլլալու չէ ներկայ ժողովը վաւերական համարելու:

Այվազեան Եպիսկոպոս շատ զրօռաւ կացութեան մէջ կը գտնուի այս պահուս, ինչպէս կ'ըսեն իր շուրջը գտնուողները:

Կ'երեւի թէ Սրբազանը խոյս կուտայ թէ՛ Աղեքսանդրիոյ և թէ՛ Գահերէի ժողովներէն ուր իր ներկայութիւնը և ինչ ինչ բացատրութիւններ տալու հարկը վստահաւոր կը համարի իր առաջնորդական պաշտօնին շարունակութեան համար:

Վերապահութեամբ ձեռք կ'իմացնեն թէ, թէ՛ հոս և թէ՛ Գահերէի մէկէ աւելի են գանգատները զորս մինչև փաշաներու ականջը տարած են Նորին Գերապատուութեան բռնած անտարբեր և տարտամ ընթացքին համար, այնպէս որ կարծեմ Նորին Գերապատուութեան Առաջնորդական Եպիսկոպոսը այսուհետև այնքան հաստատ հիմքերու վրայ չի գտնուի որքան էր մինչև հիմա:

Այսօր ամենուն լիցիտցած բանն է

թէ մեր Առաջնորդը տարիէ մ'ի վեր է որ Եգիպտոս կը գտնուի, փոխանակ խել մը երկպառակութիւններ մէջտեղէն բառնալու և մտքերը խաղաղացնելու, ընդհակառակը կերպով մը ջանացած է քաջալերել ամեն աշունք որ իրաց այդ կացութիւնը ըստեղծեցին, մանաւանդ հոս:

Եւ թերևս այս ըլլայ Ն. Վ. Պօղոս փաշայի ջիղերուն դպած պարագան:

Գալով թաղականական նոր ընտրութիւններուն, հաւանական կ'երևի թէ նախկին Թաղական խորհուրդն է որ դրեթէ ամբողջութեամբ շլիճի վերջնորդուի: Մարդիկն է որ այսպէս ըլլայ, որովհետեւ տարբեր անձնաւորութիւններ չեն կրնար օգտակարապէս շարունակել և վերջացնել այն ձեռնարկները զորս նախկին Թաղական խորհուրդը կ'աւարտէր իր թողութիւնը:

Գալով հրաժարեալ քարտուղարին յաջորդ մը տալու դործին, ապահով կերպով կրնամ յայտարարել թէ ոչ ոք թեկնածութիւնը քննուողուած է մինչև ներկայ նամակս նամակատուք նետած վայրկեանիս: Ն. Ն.

Աղեքսանդրիա 3 Յուն. 1902

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԽՈՐՀՐԴԱՌՈՐ ՈՒԺԵՐԸ

Պ. Ժիւլ Պուա որ վերջերս Բարիդի «Մաթէ» թերթին մէջ շահեկան յօդուած մը հրատարակած էր թաղուն ուժերու վրայ, Սիւլի Բրիտոմի կարծիքը հարցուցեր է այս մասին:

Պ. Սիւլի Բրիտոմ չըսեր թէ կը «հաւատայ», այլ միայն կը խոստովանի թէ շատ անգամ առիթ ունեցած է անոնց գոյութիւնը հաստատելու առանց պատճառը կարենալ հասկնալու...:

«Մօտերս», կը պատմէ, ներկայ գտնուող Օթէլի մէջ կատարուած փորձառութեան մը. հիւնք վեց հոգի էինք, զիտականներ և ինծի նման հետաքրքիրներ: Բերել տուած էինք Խօզաբիս Բալատինո հոգեհարգը: Խօզաբիս նստաւ սեղանին առջև սենեակին անկիւնը ձողիկէ մը կախուած վարագոյրէ մը մօտաւորապէս երեսուն օտարի մէջ հեռի. կանակ վարագոյրին էր, իր ձեռքերն ու ոտքերը կիսաօտարի մէջ հսկողութեան տակ էին:

Բաւական երկար ժամանակ սպասելէ ետքը, ճարտարապետի ծանր աթոռակ մը միտակը զէպի ինծի յառաջացաւ: Օղին մէջ բարձրացաւ, յետոյ սեղանին վրայ գետեղուեցաւ... Ձեռքս վեր վերելու, յանկարծ «մէկը» բռնեց զայն... կոնակիս դաժան հարուած մը ստացայ, աթոռը որուն վրայ նստած էի զղղկեցաւ, զգացի որ մազերս կը քաշն և զլուխս ոնգանին վրայ կը մըղեն... Այնքա առջև կիթառ մը պտտեցաւ օղին մէջ առանց ձեռք մը զայն բռնած ըլլալու: Ձայներ ինքնաբերաբար բարձրացան երաժշտական գործիքէն... Իմ ետիս, զլուստ վերեւ, բնիկներս թեթեօթեօ լուսեղէն ձեռքերու ձեռք տեսաւ: Անձանթ շնչով մը ուռցիկ վարագոյրէն բղիւղ կը թուէին անոնք: Խօզաբիս կը տառապէր ամեն անգամ որ նորանշան երեոյթը տեղի կ'ունենար: Կարծես թէ իր հոգին էր որ նիւթ կը մատակարարէր անոնց:

«... Բայց ամեն բանէ աւելի վրաս ազդեցութիւն կատարողը եղաւ փորձառական նիստին վեճիկաւոր ետքը թիկնաթոս մը որ առանձին մնացած էր վարագոյրին ետին և որ յանկարծ անկէ դուրս սկսաւ ելլել և զէպի Խօզաբիս յառաջանալ... Երբ տուն վերադարձայ, այդ ինքնաշարժ թիկնաթոսին տեսիլը միայն կը չարաբեր մզաւանջի մը տանջանքով:

Պ. Ժիւլ Պուա Սիւլի Բրիտոմի կարծիքը կը հարցնէ այս նորանշան երեոյթներու մասին: Բանաստեղծը կը պատասխանէ:

«Բնախօսութիւնը չի կրնար բացատրել զանոնք... Իսկ խաբերայութիւնը անհաւատարի կը թուի ինձ. բոլորնիս ալ մէկգէլ կու վրայ վստահ էինք, բայց զիտական մտքէ բոլորովին զուրկ ըլլալու է մարդ ըստաներուս հաւատալու համար առանց ինքն ալ աչքով տեսնելու զանոնք»:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Եգիպտոսի Հայ-Հոթմէական ազգային ներու նորընտիր Առաջնորդ Արհ. Տ. Պօղոս Եպիսկոպոս Սապազեան իր եպիսկոպոսական անդրանիկ պատարագը մատուցելու առաւօտ Տարպ-Է-Կիլիկիայի եկեղեցիին մէջ: Յրանաական հանրապետութեան Եգիպտոսի զիտանգիտական գործակատար Պ. Քօկօրտան, իր հետն ունենալով զործակալութեան Ա. Թարգմանը Պ. Քիւրքի և քարտուղարներէն Պ. Լըքոնդ, և ուրիշ երկու բարձր պաշտօնատարներ, ամենքն ալ համագործակող, ներկայ գտնուեցան պատարագին որու միջոցին Հայերէն և արա-

Խ. Տ. Ե. Մ. Ի. Բ. Զ. Ե. Ա. Ն.

ԱՅՏԱՅՆԱԲՈՅԾ

ԳԵՄԱՆԷԼ ՓՈՂՈՑ ԹԻՒ 3 ՕՐԷԼ ՇԷՓԸՐՏՈՒ ԴԻՄԱՅ

Ելեքտրական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ակուայի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար և նման կեղծ ակուաներու, ասկիթներու ոսկիէ, ալիւմինիումէ, ֆալցուէ: Ապահով և տոկուն քոյմպաժ ոսկի, բլաթին, կայն, կայն: Լինտերու հիւանդութեանց դարսանում ելեքտրական և ուրիշ միջոցներով:

բերեն լեզուով կարգադրեցան Սապաղեան Եպիսկոպոսի առաջնորդական կոնգակը:

Նորին Արհիպատոսութիւնը հանգիստութեամբ պատարագեց շուրջ ունենալով ամբողջ իր կղերը:

Եկեղեցին շատ նեղ կուգար հաւատացեալներու բազմութեան համար որուն մէջ իգական սեռը լայն տեղ մը կը գրաւէր:

Եկեղեցական արարողութիւնները վերջանալուն Պ. Քօկօրտան և իր հետնորդները Առաջնորդարանի մեծ սրահը առաջնորդութեան ուր կատարուեցաւ պաշտօնական ընդունելութիւնը:

Պ. Քօկօրտան շատ սիրալիր տեսակցութիւն մը ունեցաւ Նորին Արհիպատոսութեան հետ:

Հայր Իգնատիոս Ծ. Վ. Մալոյեան որ մեծ դերութեամբ կը խօսի ֆրանսերէն լեզուն, խիստ շնորհալի կերպով կատարեց թարգմանի պաշտօնը որու միջոցին ցոյց տուաւ կատարեալ կենցաղագիտութեան վերջմը:

Փաստարան Տիար Պրոսպէր լաւ դարձուած ֆրանսերէնով մը պզտիկ ատենախօսութիւն մը ըրաւ Պ. Քօկօրտանի ուղղեալ և յանուն Հայ-Հռոմէական գաղութին, շնորհակալութիւնը յայտնելէ ետքը, խնդրեց Պ. Քօկօրտանէ որ անպակաս ընէ իր հովանաւորութիւնը այդ փոքրիկ քաղութիւն վրային որ մէկ մասն է Հայ ազգին և որ խաչակրութեան ժամանակներէ իվեր սերտ մտերմութեամբ կապուած է ֆրանսական մեծ ազգին հետ և որուն համակրութիւնը վայելած է միշտ, մանաւանդ այս պահուստ ուր ազգին արդի դժբախտ վիճակը այնքան կը հետաքրքրէ հանրային կարծիքը ի Ֆրանսա և որ համակրանքի ցոյցերով կը բաշխուի հայութիւնը:

Ի պատասխանի Տիար Պրոսպէրի խօսքերուն, Պ. Քօկօրտան շատ սիրուն բաներով իր շնորհակալութիւնը յայտնեց իրեն եղած ընդունելութեան համար և ըսաւ թէ Ֆրանսա միշտ մարդասէր զգացողներ տաժած է հայերու մասին և այժմ առաւել քան երբէք այդ զգացումը կը շնչատի ինչպէս կը տեսնուի այն համակրանքի ցոյցերէն որ հանրային կարծիքը կարողացաւ ի Ֆրանսա ի նպաստ Հայ ազգի վիճակին բարեփոխման:

Այս բանախօսութիւնը ծափահարութեանց մէջ տեղ վերջացաւ և ներկաները միարեւրան—կիցցէ՛ Ֆրանսան—հնչեցուցին երկիցս:

Փոքրիկ սիրուն աղջիկ մը Օր. Վիքթորին Ալիզ, ֆրանսերէն ոտանաւոր ուղերձ

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (46)

ԺԸՀԱՆ ՏԻՎԻԷ

ԲՐԷՆԱ ՄՈՒՐԱՏ

ԵԴԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇԵՆՈՒԱՅ ՎԷՊ

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ուստի ժերմէն կըցաւ առանց բռնազօսութեան վեց ամիս կատարեալ հանգարտութիւն վայելել: Առանց հանրմը իրեն խօսած ըլլալու, կը զգար որ անի նուաճուած էր, ու ինքն ալ սաստիկ անուշութիւն մը կը զգար տեսնելով որ Մուրատին մայրը իրեն կը հաւնէր ու զինքը կը յարգէր:

Իր աշակերտութիւններուն յարաճուն խանդավառանքը, անոնց միամիտ ու շարուն

մը կարողաց ուղղեալ Սապաղեան Եպիսկոպոսի և Պ. Քօկօրտանի:

Արդէն կէս օր էր երբ Ֆրանսայի ներկայացուցիչը մեկնեցաւ Առաջնորդարանէն լաւագոյն տպաւորութիւն մը թողլով ներկայ եղողներուն վրայ:

—Սապաղեան Գերազանդաւայտօրութեան անհամար է փոխադարձ այցելութեան պըտըտիլ, կէս օրէն առաջ Հ. Իգնատիոս Ծ. վարդապետ Մալոյեանի ընկերակցութեամբ մեր Առաջնորդարանը եկաւ, ուր սիրալիր ընդունելութիւն մը կատարուեցաւ իրեն:

—Կաղանդի և Երնդեան այցելութիւններէ զերծ մնալու և այդ առթիւ Որդական ներու նուէր մը ընել փափաղողներու կը ծանուցուի թէ իրենց նուէրները կրնան զըլկել առաջնորդարանի գլխաւորատէր Տիար Ն. Մ. Աղադարմի որ միենայն ատեն ատենապետն է այդ ընկերութեանց խառն յանձնաժողովին:

Նուիրատուութեանց ցանկերը մեր թերթին մէջ պիտի հրատարակուին յաջորդաբար:

—Տիար Լևոն Մկրտիչեան երկարապատում և անբաղաճալար յողովածով մը պատասխանել կարծած է մեր «Արարչութեան Յաղթանակը» վերնագրով յողովածներուն:

Տիար Մկրտիչեան չէ կըցած և կամ չէ ուղած ըմբռնել մեր նպատակը:

Որքան ատեն որ Աղեքսանդրիոյ թաղականութեան բարտուղարի հանգամանքով և կէս ձգաշտօնական ձևով կը ներկայանար լրագրական հրապարակին վրայ, պարտականութիւն մը սեպած էինք պարզապէս՝ ըզբաղել Տիար Լևոն Մկրտիչեանի անձով և իր գրուածներով:

Անգամ մը որ այդ միջավայրին կը հեռանայ, Մկրտիչեանի մը անհատականութիւնը մեր մտահոգութեանց կրտսերագոյնը կը դառնայ և այնքան կը հետաքրքրուինք անով, որքան կը հետաքրքրուինք մեր փոխած շապիկներով:

Տիար Լևոն Մկրտիչեան ուրեմն, այսուհետև ուղածին չափ և ուղածին պէս կըընայ զրել: Ոչ ոք կարգիլէ զինքը այդ բանը ընելէ, եթէ ատիկայ հաճոյք կը պատճառէ իրեն:

Ա. Զ. Դ.

Պետրոս էֆ. Կարապետեան պատիւունի ծանուցանելու թէ առաջիկայ հինգշաբթի 9 Յունուար (Ն. Տ.) պաշտօն և պատարագ պիտի մատուցուի Դահլիճի Ս. Առտուածածին եկեղեցւոյ մէջ, ի հանգիստ հոգեւոր բարեկեցատակ հօր՝ հանգուցեալ Պօղոս էֆ. Կարապետեանի:

Նախկալ սքանչելիութեամբ բոլորովին կը չորս զինքը անպատմելի գոհունակութեամբ: Այդ ձմեռը պալատին մէջ անցուցած ժամանակին լաւագոյն մասը եղաւ. կարճատե հիւանդութիւն մը զոր ունեցաւ այդ ժամանակ, և որուն միջոցին Սթա Ապուհա իր սնարէն չղատուեցաւ, սափպեց զինքը որ ներէ իր սիրելի ապստամբական: Փոքրիկ ֆելլահ աղջկան աղբոսարիւ աչքերը, աւոր կարկառեալ ձեռքերը և անոյշ շրթունքները որ փակչած կը մնային ջերմէն տուրած իր այտին, յաղթեցին վերջապէս իր թխապահութեան և իր ուժացմանը. եթէ տակաւին թիչ մը դառնութիւն մնաց ժերմէնի սրտին մէջ, եթէ իր յիշողութիւնը զարձեալ կը պատկերացնէր դեռ իր առջև այն յիշատակը զոր կը վաճէր, յաջողեցաւ ծածկել զայն խեղճ աղջկէն, զոր

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱԺԽԱՐՀԵՆ

ՏԷՎԷԹ ԶՕՐԱՎԱՐԸ. — Եթէ թշնամութիւնները զարդէն վերջը Տէվէթ Անգլիա դար, այն տեսակ ընդունելութիւն մը պիտի գտնէր՝ որուն 'մասնը բնաւ տեսնուած չէ: Էտուարտ Է. ի պիտի ներկայանար, Պ. Պալմերի կողմէ սեղանի պիտի հրահրուէր, և Պ. Չեմպլըն կարելի է պիտի խնդրէր Տէվէթէն որ քանի մը օր հիւր մնայ Հայալբերի իր գեղեկէին մէջ Պիրմիլէթի մօտ: Անգլիոյ պատեւրագական նախարարութեան բարձրատիճան պաշտօնատարները զայն պիտի ողջագոյնէին, իրանտացի ազգայնականները ուրախութեան արտայայտի պիտի թափէին՝ անոր ձեռքը սեղմելով. զինուորական ու բաղաճային մեծ ակումբները, Տէվէթի սեղաններ տալու մասին, պիտի մրցէին աշնուական դասակարգին հետ: Կարելի է Տէվէթ վերջապէս Անգլիոյ մէջ պիտի հաստատուէր և Սէնտ-հուրսի զինուորական վարժարանին մէջ բարձր պաշտօն մը պիտի տրուէր անոր, անգլիական զեռատի սպաներուն ազգամակտութիւն ուսուցանելու համար. կարելի է, ո՛վ գիտէ, պատեւրագական նախարարութեան խորհրդական պիտի ըլլար: Անգլիոյ մէջ պարզապէս կը սքանչանան այդ մարդուն վրայ՝ որ հապիկ կարողաւ ու գրել գիտէ, այդ Պօէր հրամանատարը որ, առանց ղեկորական ամենափոքր հմտութեան, հետզհետէ յաղթեց անգլիական ամենէն լաւագոյն զօրավարներուն: Ետտ դժուար չէ գտնել այդ հիացումին պատճառը. նոյն իսկ հեռուանքն է մրցումին այն ոգիին՝ որ ամեն բանէ աւելի կը տիրէր Անգլիացիներուն սէջ: Անգլիացիներուն աւելի հաճոյք պատճառած է սա պարագան թէ Տէվէթ քանի անգամներ Բրիտանական զինուորներուն կողմէ պաշարուելով հանդերձ, ամեն անգամ կը փախչի, բոլորովին կ'անհետանայ և յետոյ նորէն երևան կ'ելլէ երկրին մէկ ուրիշ մասին մէջ: Երկրակալութեան ամենաջերմ կուսակից Անգլիացիներուն իսկ հաճոյք պատճառած է Տէվէթ իր այն ճարտարութեան համար՝ որ երբ իրմէ աւելի զօրաւոր անգլիական զօրագունդի մը առջև գտնուի, կը նահանջէ և այդ միջոցին գերի կը բռնէ աւելի փոքրածիւ անգլիական խումբեր և կը զբաւէ փոխադարձութեամբ: Անգլիացիները կը յարգէին Ժուպլը. իսկ Տէվէթ վրայ կը սքանչաւ

նան: Երբ ծանուցուի թէ Տէվէթ ծանր պարտութեան մը մատնած է Անգլիացիները, ինչպէս Թուրքիային, Անգլիացիները ու անոնց լրագրիները այնքան զան լեզուով չեն խօսիր, բայց խնդրը կը փոխուի երբ այդ յաղթանակը ուրիշ Պօէր հրամանատար մը տարած ըլլայ: Անգլիացիները, ինչպէս ամեն մարդ, ձանձրացած են այդ պատերազմէն, բայց Տէվէթի ըրածները հետաքրքրութիւն կը պատճառեն: Երբ Տէվէթ վրայ խօսուի, երկրակալութեան կուսակիցները ինչպէս նաև Պօէրները սա խօսքերը կ'ըսեն. — «Պէտք եղածին պէս կը խաղայ իր խաղը. պարկեշտութեամբ կը պատեւրագի»: Ատոր համար է որ կը սքանչանան անոր վրայ և այդ հիացումը զրուստիքն է անգլիական նկարագրին:

ԻԹՕ ՄԱՐԲԻՉԸ. — Ճարտնի նախկին նախարարապետ Իթօ մարքիզը, Դեկտ. 27ին ներկայացաւ Անգլիոյ թագաւորին, արասքին գործոց նախարար Լորտ Լանստաունի առաջնորդութեամբ: Ներկայ էր նաև Լոնտոնի ճարտական զեռպան Պառն Հանս-ժիլ: Ունկնդրութիւնը տեղեց քսան վայրկեան: Իթօ մարքիզը Լորտ Լանստաունի բնակարանը երթալով այցելութիւն տուաւ և ոչ թէ արտաքին գործոց պաշտօնարանը: Լորտ Լանստաուն ալ յետոյ Իթօ մարքիզին այցելութեան գնաց՝ անոր բնակած օթելը: Յունուար 3ին Լոնտոնի բաղաճապետութեան պաշտօնարանին մէջ սեղան մը պիտի տրուի Իթօ մարքիզին ի պատիւ: Ճարտնի նախկին նախարարապետը բաղամիւ հրահրուի ստացաւ, բայց անոնց մեծ մասը չկըցաւ ընդունել, վասնզի Յուն. Տիւ Անգլիայէն պիտի մեկնի:

ՏԵՂԱԿԱՆ

Աղեքսանդրիայէն կը գրեն թէ սեղանաւորական և առևտրական գործերը նուազեցան խափական Պօստին մէջ այդ տօնի օրերուն: Հաւանական է որ այս վիճակը տեւ մինչև Գուրպան Պայրամի տօները:

—Գահիրէի մէջ Պօստի կեդրոնին կաշմութեան լուրը լաւ ընդունելութիւն գտաւ, որովհետև կը յուսացուի թէ մայրաքաղաքին մէջ Պօստի մը գոյութիւնը վերստին պիտի մղէ Գահիրէցիները շահագիտութիւն: Նիւտ և այսպէսով նոր զարկ մը պիտի տայ առևտրական և ելմտական գործերուն:

—Թաղապետական ընտրութիւնները պիտի սկսին փետրուարի սկիզբը: Այս խորհրդակալները որոնց պաշտօնավարութեան

աշխատութեանց կամ ճարտարութեան ամբողջ շարք մը նկարագրելու. անոնցմով եղած հաշար ու մէկ գործածութիւնները ծանօթ էին անոր, ու Սթա Ապուհա մտիկ կ'ընէր, չատ ուշադիր, շատ ալ հանճարեղ, թոած ատենին կը հափափէր կը կլէր գիտութեան այդ կտորքերովները որ զինքը կը շահագրգռէր, որ իր բարեկամութիւն բովանդակ գիտութեամբը զինքը կը մեծցունէին:

Իր ցեղին յատուկ եղող իւրացուցման այս կարողութեամբ, կարող կ'ըլլար ամեն բան հասկնալու, իրերը կ'ըմբռնէր՝ զեռամբողջովին իրեն չբացատրուած իսկ:

Այսպէս, թիչ թիչ յանցապարտ անցեալը կ'անհետանար. մոլի էակը ինչպէս որ ինքը եղած էր, սիրուն զեռատի աղջկան մը կը փոխակերպուէր, ամեն բանով արծառի անոր որ իրեն ուսուցիչը կ'ըլլար:

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՑՅՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՖԵՐՈՒ

Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ց

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐԻԻ ԱՄԵՐԻԿԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆԱՑ 1843 ՎՅ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՅՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կարելի դրուսիւնները կը գո ծաղրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զուական դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւ այլն

ՄՈՒՉՈՒԱՆ ԼԱՅՑԻ սակագինը և ապահովագրութեան զանազան գրութիւնները չուսումնասիրած մի՛ ապահովագրութիւն. — Առատաձեռն պայմաններ
Տեղեկութեանց համար գիտել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼԻՅԵՒ, Ընդհ. ներկայացուցիչք
Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխավոր գործակալուար. Գ. ԵԿԱՒԻՑ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԵՏԻ ԼԻՓՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԿԱՆՈՒՄ 200,000,000 ՅՐԱՆԲ

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻ Ե ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԵ ԲՈՒՍԱՅԻՏ

ԳՐԵՏԻ ԼԻՓՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Յրանալի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը դանձէ եգիպտոսի և արաւսահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ ձգուած գրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուծակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԽԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻԾ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիրէա, Իզմիր, Միտիլի եւ Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաւները Բիրէա հանգիպելուն, Աթէնք այցելել:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻԾ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոս-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնտէրլի:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն շաբաթ օր, առաւօտեան ժամը 6ին:

Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին. Տաւրիզինք օրը անգամ մը՝ երթեկեկ կարմիր

Ծովու հետեւալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանսաց համար գիտել ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բոս-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրբի ամեն մասնաճիւղերուն:

1--1902

ՅՈՒՆԱՍՏԱՆ-ԳՈՐԾԱԿԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶԵՆԿԱՅԵԱՆ

Ի ԳԱՀԻՐԵ

Գահիրէէն և շրջականներէն կ'ընդունուին՝ Պոլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կեդրոններ դառնաւ ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրկի, Պրոնշուիկի վիճակահանում թեանց տոմսակներու, եգիպտական ֆրէտի Ժոնսի, Բումբէլի երկաթուղւոյ բրոմէաներու, և դարձեալ ամսավճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ և այլն:

Արժէթղթերու, վիճակահանութեանց վերաբերեալ ապստանքները ըլլալու են կանխիկ փոխութի միջոցաւ. Գիրքերու համար կարելի է նախապէս կէսը զրկել և մնացեալը «գծելու ուժ» պուրստման» վճարել այն պահուն, երբ յանձնարարութեանց զրկուին իրենց հասցէներուն:

Մինչև 20 վրշ. արժէքով յանձնարարութիւններու համար եգիպտ. 3. միլիոնոց զրոյշման թուղթեր կ'ընդունուին:

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի և այլն ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանի:

Հասցէ՝

Garabed Erzenatzian
Rue Abdul-Aziz

CAIRE

Ա. ՄԱՅԵՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԵ

—(—)

Մեծ վաճառատուն հանգերձեղինաց, արանց, կանանց և տղայոց համար:

Ձախի վրայ զգեստներ, շուագոյն պայմաններով:

ՎԵՐԶԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏԻՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԽՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի յէջ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւերով

ԱՆՐԱՐԷՕՐ ՆԻՔՕԼԻ. տրղթ. Թոն. 5500	2ԻՍԱՋՅ տարողութիւն Թոն. 5500
Բէն ՕԼԿԱ. " " 5500	2ԱՐ " " 5500

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ՝ ՄԸ կանոնաւոր միկնում Աղեքսանդրիայէն դէպ ի Օտէա, հանգիպելով ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԶՐԻՄ ՏՄԱՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաւներուն հետ որ ուղղակի կ'երթան ՄԷՎԱՏՏՈՒՄ, ՍԵԻ ԾՈՎՈՒ ՍՈՒԱՅԻՆ ԵԶԵՐՔԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՍ և ԱՋՈՅԻ ԾՈՎ:

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵՍՖԱ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՍՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Աղեքսանդրիա, Թիքասան փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագրութիւն Մնդլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր ԷՎԼԻՆ Բալմէր.

Ընդ. կեդրոն ի Գահիրէ: Մասնաճիւղեր. Աղեքսանդրիա, Մանսուրա, Խաբթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կ'ընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ աւանդների և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴԺՈՒՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ և ինչ որ հիմնապէս բուժելու համար պէտք է առնուած վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն աղբուղեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ ալբուրային դեղերու նման չի խանգարեր ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

39--316